ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի՛ պարոն Սիմոնյան,**

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասով, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 65-րդ հոդվածի 1-ին մասով՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ ենք ներկայացնում «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և ««էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերը:

Նախագծին կից ներկայացվում են դրա ընդունման հիմնավորումը, տեղեկանք, որտեղ տեսանելի ձևով ներկայացվում է համապատասխան հոդվածներում առաջարկվող փոփոխությունները, լրացումները և խմբակցության որոշումն օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու վերաբերյալ:

Նախագծի հիմնական զեկուցողն է Վլադիմիր Վարդանյանը:

Խնդրում ենք նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

**«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝**

**ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

**25.06.2025թ.**

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# ՈՐՈՇՈՒՄ

## «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ ««ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԸ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասը, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 65-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն իր 2025 թվականի հունիսի 25-ի նիստում

**Ո Ր Ո Շ Ե Ց**

Հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ և շրջանառության մեջ դնել «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և ««էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերը:

**«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝**

**ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

**25.06.2025թ.**

**«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ»**

**ՕՐԵՆՔՈՒՄ**

**ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» 2003 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-18-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 9-րդ մաս.

«9. Կառավարության լիազոր մարմնի հաղորդման առկայության դեպքում, որով առերևույթ հիմնավորվում է, որ վտանգվել է կամ կարող է վտանգվել էներգետիկայի բնագավառի բաղկացուցիչ համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ հավանական խախտումը հանգեցրել է կամ կարող է հանգեցնել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման, Հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ անհապաղ, բայց ոչ ուշ քան հաղորդումը ստանալուց հետո հինգօրյա ժամկետում հարուցվում է վարչական վարույթ: Վարչական վարույթ հարուցելու մասին որոշմամբ կարող են կիրառվել «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-րդ հոդվածով սահմանված կանխարգելիչ միջոցառումները: Սույն մասով սահմանված դեպքում չեն կիրառվում սույն հոդվածով նախատեսված այլ կարգավորումները:»:

**Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքով սահմանված կարգավորումները տարածվում են նաև մինչև դրա ուժի մեջ մտնելը թույլ տրված խախտումների նկատմամբ:

**«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ»**

**ՕՐԵՆՔՈՒՄ**

**ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Էներգետիկայի մասին» 2001 թվականի մարտի 7-ի ՀՕ-148 օրենքի (այսուհետ՝ Օրենք) Օրենքի 27-րդ հոդվածում.

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.1-րդ և 2.2-րդ մասերով.

«2.1. Սույն հոդվածի 1-2-րդ մասերում նշված գործարք իրականացնելու մտադրության դեպքում Կառավարությունը գործարքի առարկա գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի ձեռքբերման նախապատվության իրավունք ունի: Սույն մասով սահմանված նախապատվության իրավունքի իրացման նպատակով լիցենզիա ունեցող անձը ծանուցում է Կառավարությանը համապատասխան գործարք իրականացնելու մտադրության մասին: Կառավարությունը կարող է օգտվել իր նախապատվության իրավունքից նշված ծանուցումը ստանալուց հետո եռամսյա ժամկետում՝ լիցենզիա ունեցող անձին ծանուցելով այդ մասին: Նախապատվության իրավունքը իրացնելու կարգը սահմանվում է Կառավարության որոշմամբ:

2.2. Սույն հոդվածի 2.1-րդ մասում նշված նախապատվության իրավունքի իրականացման դեպքում գործարքի առարկա գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի ձեռքբերման արժեքը չի կարող գերազանցել դրանց շուկայական արժեքը, որը որոշվում է «Գնահատման գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով տրված գնահատման հաշվետվությամբ: Մեկից ավելի գնահատման հաշվետվությունների առկայության դեպքում հիմք է ընդունվում դրանցով սահմանված արժեքների միջինը, եթե տարբեր գնահատման հաշվետվություններով սահմանված արժեքների տարբերությունը չի գերազանցում 10 տոկոսը: Մեկից ավելի գնահատման հաշվետվությունների արժեքների տարբերությունը 10 տոկոսից ավելին լինելու դեպքում հիմք է ընդունվում 10 տոկոսի չափով տարբերությունը, և գնահատման արժեքը որոշվում է սույն հոդվածով սահմանված կարգով:».

2) 3-րդ մասում «փորձ» բառից հետո լրացնել «կամ չի պահպանվել սույն հոդվածի 2.1-2.2-րդ մասերով սահմանված նախապատվության իրավունքի իրականացման կարգը,»:

**Հոդված 2.** Օրենքի 52-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«**Հոդված 52. Սպառողների շահերի պաշտպանության երաշխիքները**

1. Լիցենզիայից կամավոր հրաժարվելու դեպքում սպառողների անխափան մատակարարումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը, մինչև գործունեության նոր լիցենզիա տալը, իրավունք ունի համապատասխան որոշմամբ պարտադրել լիցենզիայից կամավոր հրաժարված անձին ժամանակավորապես շարունակել իր գործունեությունը՝ հանձնաժողովի սահմանած պայմաններին և դրույթներին համապատասխան կամ լիցենզավորված գործունեության իրականացումը պատվիրակել ժամանակավոր կառավարչին: Լիցենզիայի գործողությունը դադարեցվելու դեպքում սպառողների անխափան մատակարարումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը, մինչև գործունեության նոր լիցենզիա տալը, իրավունք ունի համապատասխան որոշմամբ լիցենզիայից զրկված անձի լիցենզավորված գործունեության իրականացումը պատվիրակել ժամանակավոր կառավարչին՝ բացառությամբ սույն օրենքի 52.1-րդ հոդվածով սահմանված դեպքի:

2. Հանձնաժողովը պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները նոր լիցենզիա տալու գործընթացն արագացնելու համար:

3. Եթե անձը հրաժարվում է իր գործունեությունը շարունակելուց կամ նրա լիցենզիայի գործողությունը դադարեցվել է, ապա Կառավարությունը այդ անձի բաժնետերերին առաջարկում է իր հետ համաձայնեցված կարգով օտարել այդ ընկերության բաժնետոմսերը, գույքը կամ լիցենզավորված գործունեությունն ապահովող՝ իր սեփականությունը հանդիսացող գույքային համալիրը: Սույն մասով սահմանված օտարումը եռամսյա ժամկետում չիրականացվելու դեպքում, որպես բացառիկ միջոց, բաժնետոմսերը, գույքը կամ լիցենզավորված գործունեությունն ապահովող գույքային համալիրը կարող է օտարվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածին համապատասխան:

4. Սույն հոդվածով սահմանված կարգով նշանակված ժամանակավոր կառավարչի գործունեության ժամանակահատվածը սահմանվում է մինչև սույն հոդվածով սահմանված կարգով նոր լիցենզիա տալը կամ գույքի օտարումը:»:

**Հոդված 3.** Օրենքում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 52.1-րդ հոդվածով.

«**Հոդված 52.1. Սպառողների շահերի պաշտպանության նպատակով կանխարգելիչ միջոցների կիրառումը**

1. Սույն օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ և 6-րդ մասերով սահմանված արարքը կատարելու հիմքով վարույթ հարուցելու դեպքում Հանձնաժողովի նախագահը կարող է կայացնել վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու մասին որոշում: Կանխարգելիչ միջոցառումների կիրառման դեպքում, ի թիվս այլնի, հաշվի է առնվում նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը:

2. Սույն հոդվածով սահմանված կարգով Հանձնաժողովի նախագահը իրավասու է կիրառել հետևյալ կանխարգելիչ միջոցառումներից մեկը կամ մի քանիսը միասին.

1) սահմանել առերևույթ խախտումների վերացման կամ դրանց հետևանքների վերացման ծրագիր և լիցենզավորված անձից պահանջել իրականացնել դրանով սահմանված միջոցառումները.

2) հրավիրել լիցենզավորված անձի կառավարման բարձրագույն մարմնի ժողով՝ Հանձնաժողովի նախագահի կողմից սահմանված օրակարգով.

3) պահանջել Հանձնաժողովի նախագահի սահմանած ժամկետում կատարել լիցենզավորված անձի կանոնադրության փոփոխություն և գրանցել կանոնադրության փոփոխությունները.

4) պահանջել Հանձնաժողովի նախագահի սահմանած ժամկետում կատարել լիցենզավորված անձի կառավարման մարմինների անդամի կամ անդամների փոփոխություն.

5) նշանակել լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարիչ:

3. Լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարչի նշանակմամբ նրան են անցնում լիցենզավորված անձի գործադիր մարմնի բոլոր լիազորությունները՝ բացառելով ժամանակավոր կառավարիչ նշանակելու մասին որոշմամբ սահմանված ժամանակահատվածում լիցենզավորված անձի գործադիր մարմնի կողմից լիցենզավորված անձի գործադիր կառավարումն իրականացնելը: Լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարչի գործունեության ժամանակահատվածում լիցենզավորված անձի կառավարման

այլ մարմինները իրենց իրավասությունները իրականացնում են ժամանակավոր կառավարչի համաձայնությամբ:

4. Ժամանակավոր կառավարիչ կարող է նշանակվել բարձրագույն կրթություն և էներգետիկայի բնագավառում կամ կառավարման առնվազն 5 տարվա փորձ ունեցող կամ գործունեություն իրականացնող անձը:

5. Ժամանակավոր կառավարիչ նշանակելու դեպքում Հանձնաժողովի նախագահը վարչական վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառում կիրառելու մասին որոշմամբ պետք է սահմանի նաև ժամանակահատվածը, որի ընթացքում գործելու է ժամանակավոր կառավարիչը, որը կարող է սահմանվել ոչ ավել քան մինչև վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտի ուժի մեջ մտնելը:

6. Սույն հոդվածով նախատեսված վարչական վարույթի արդյունքում լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որոշում կայացվելու դեպքում ժամանակավոր կառավարչի գործունեության ժամանակահատվածը շարունակվում է մինչև սույն օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված գործընթացների ավարտը, եթե լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որոշմամբ Հանձնաժողովը չի նշանակում այլ կառավարիչ՝ սույն օրենքի 52-րդ հոդվածով սահմանված կարգով:

7. Ժամանակավոր կառավարիչ նշանակելու մասին որոշումը պետք է հրապարակվի Հանձնաժողովի պաշտոնական կայքում և տեղադրվի Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, իսկ ժամանակավոր կառավարչի վերաբերյալ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված տեղեկություններն իր դիմումի հիման վրա գրառվեն իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանում:

8. Ժամանակավոր կառավարչի գործունեության դիմաց վարձատրությունը իրականացվում է լիցենզավորված անձի հաշվին՝ Հանձնաժողովի նախագահի կողմից սահմանված չափով:

9. Ժամանակավոր կառավարչի գործունեության արդյունքում լիցենզավորված անձին պատճառված վնասները ենթակա են հատուցման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով:»:

**Հոդված 4. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքով սահմանված կարգավորումները տարածվում են նաև մինչև դրա ուժի մեջ մտնելը թույլ տրված խախտումների նկատմամբ:

3. Սույն օրենքի 2-րդ հոդվածից բխող ենթաօրենսդրական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**
**«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ««ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

1. **Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.**

Հայաստանի Հանրապետությունում էներգետիկայի բնագավառում գործունեության կարգավորումն իրականացվում է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից՝ «Էներգետիկայի մասին» օրենքով սահմանված կարգով: Այս համատեքստում լիցենզավորված անձի նկատմամբ վարույթ հարուցվելու կամ նրա լիցենզիայի գործողությունը դադարեցնելու դեպքերում փաստացի չեն նախատեսվում երաշխիքները, որոնք կապահովեն նման դեպքերում կրիտիկական այս կարևոր ենթակառուցվածքների բնականոն և անխափան գործունեության շարունակականությունը, ինչը միտված է նաև սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը:

**2. Կարգավորման ենթակա խնդիրը.**

Առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է.

- սահմանել ոլորտի լիցենզավորված անձանց գործունեության առանձնահատուկ ռիսկայնության դեպքում Կառավարության լիազոր մարմնի կողմից հաղորդում տալը և դրա հետևանքները.

- սահմանել ոլորտի լիցենզավորված անձանց նկատմամբ վարույթ հարուցելիս նրանց նկատմամբ կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու հնարավորությունը.

- սահմանել կանխարգելիչ միջոցառումների կիրառման կարգն ու առանձնահատկությունները:

**3. Նպատակը և ակնկալվող արդյունքը.**

Նախագծերի նպատակն է ապահովել էներգետիկայի բնագավառում սպառողների իրավունքների և օրինական շահերի առավել համապարփակ պաշտպանությունը՝ հաշվի առնելով նաև ոլորտի գործունեություն կրիտիկական կարևորությունը:

# ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ»

## ՕՐԵՆՔԻ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հոդված 36. Հանրային ծառայությունների ոլորտում հնարավոր իրավախախտման վերաբերյալ հաղորդման կամ դիմում-բողոքի քննարկման կարգը**

1. Հանրային ծառայությունների ոլորտում հնարավոր իրավախախտման վերաբերյալ հաղորդումը (այսուհետ՝ հաղորդում) կամ դիմում-բողոքը քննարկվում է այն հանձնաժողով մուտքագրվելու օրվանից հետո՝ երեսնօրյա ժամկետում:

2. Եթե հաղորդմամբ կամ դիմում-բողոքով ներկայացված հարցը լրիվ կամ մասնակի ենթակա է այլ վարչական մարմնի իրավասությանը, ապա հանձնաժողովն այն ամբողջությամբ կամ համապատասխան մասով մուտքագրվելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում վերահասցեագրում է իրավասու մարմնին՝ ծանուցելով դիմողին:

3. Եթե հաղորդմամբ կամ դիմում-բողոքով ներկայացված հարցը դուրս է ինչպես հանձնաժողովի, այնպես էլ այլ մարմնի իրավասությունից, կամ հստակ չէ ներկայացված պահանջը, ապա հանձնաժողովը հաղորդումը կամ դիմում-բողոքը կից փաստաթղթերով մուտքագրվելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնում է դիմողին՝ նշելով պատճառների մասին:

4. Հանձնաժողովը հաղորդմամբ կամ դիմում-բողոքում ներկայացված հարցի փաստական հանգամանքների բազմակողմանի և լրիվ քննարկման համար տեղեկություններ կամ պարզաբանումներ ստանալու նպատակով կարող է դիմողից, կարգավորվող անձից, իրավասու այլ մարմնից կամ կազմակերպությունից պահանջել ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկություններ:

5. Հանձնաժողովը հաղորդման կամ դիմում-բողոքի քննարկման համար անհրաժեշտ փաստական հանգամանքներ պարզելու նպատակով լրացուցիչ տեղեկություններ կամ պարզաբանումներ ստանալու նպատակով կարող է առավելագույնը 15 օրով երկարաձգել հաղորդման կամ դիմում-բողոքի քննարկման ժամկետը՝ այդ մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցելով դիմողին:

6. Ճյուղային օրենքներով իր իրավասությանն առնչվող և դրանց հիման վրա ընդունված՝ հանձնաժողովի իրավական ակտերի հնարավոր խախտումների բացահայտման դեպքում, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքերի, հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցվում է վարչական վարույթ՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցելով դիմողին և հնարավոր խախտում կատարած անձին:

7. Հաղորդման կամ դիմում-բողոքի քննարկման արդյունքներով դիմողին տրվում է գրավոր պարզաբանում, եթե՝

1) բացակայում է խախտումը.

2) քննարկվող հարցի վերաբերյալ առկա է վարչական կամ դատական ակտ, կամ հարցը վարչական կամ դատական քննության փուլում է.

3) անձն օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով ենթակա է ազատման պատասխանատվությունից.

4) արարքը, իրավակարգավորման փոփոխությամբ պայմանավորված, դադարել է իրավախախտում համարվելուց.

5) կարգավորվող անձը սպառողին կամ դիմող անձին վճարել է խախտման համար հանձնաժողովի հաստատած կանոններով նախատեսված տույժը.

6) լրացել է պատասխանատվության ենթարկելու՝ սույն օրենքով սահմանված վաղեմության ժամկետը.

7) կարգավորվող անձը լուծարվել կամ մահացել է.

8) դիմում-բողոքը ներկայացրել է ոչ շահագրգիռ անձը.

9) դիմումով առաջադրված հարցը դուրս է հանձնաժողովի իրավասությունից:

8. Եթե դիմում-բողոք ներկայացրած անձը հրաժարվել է դրանից կամ հայտնել խնդրի կարգավորման մասին, ապա հանձնաժողովը դիմում-բողոքի քննարկման ընթացքը դադարեցնում է:

9. Կառավարության լիազոր մարմնի հաղորդման առկայության դեպքում, որով առերևույթ հիմնավորվում է, որ վտանգվել է կամ կարող է վտանգվել էներգետիկայի բնագավառի բաղկացուցիչ համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ հավանական խախտումը հանգեցրել է կամ կարող է հանգեցնել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման, Հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ անհապաղ, բայց ոչ ուշ քան հաղորդումը ստանալուց հետո հինգօրյա ժամկետում հարուցվում է վարչական վարույթ: Վարչական վարույթ հարուցելու մասին որոշմամբ կարող են կիրառվել «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-րդ հոդվածով սահմանված կանխարգելիչ միջոցառումները: Սույն մասով սահմանված դեպքում չեն կիրառվում սույն հոդվածով նախատեսված այլ կարգավորումները:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ»**

**ՕՐԵՆՔԻ**

**ԼՐԱՑՎՈՂ ԵՎ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Հոդված 27. Լիցենզիա ունեցող անձի գործարքային իրավունքների սահմանափակումը**
***(վերնագիրը խմբ. 07.02.18 ՀՕ-100-Ն)***

1. Լիցենզիա ունեցող անձի 25 և ավելի տոկոս բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման, գրավադրման, ինչպես նաև լիցենզիա ունեցող անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն տվող բաժնեմասի (բաժնետոմսի, փայի)՝ անկախ քանակից, օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման դեպքում լիցենզիա ունեցող անձը պարտավոր է նախապես ստանալ հանձնաժողովի համաձայնությունը:

2. Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման համար լիցենզավորված անձը պարտավոր է նախապես ստանալ հանձնաժողովի համաձայնությունը:

«2.1. Սույն հոդվածի 1-2-րդ մասերում նշված գործարք իրականացնելու մտադրության դեպքում Կառավարությունը գործարքի առարկա գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի ձեռքբերման նախապատվության իրավունք ունի: Սույն մասով սահմանված նախապատվության իրավունքի իրացման նպատակով լիցենզիա ունեցող անձը ծանուցում է Կառավարությանը համապատասխան գործարք իրականացնելու մտադրության մասին: Կառավարությունը կարող է օգտվել իր նախապատվության իրավունքից նշված ծանուցումը ստանալուց հետո եռամսյա ժամկետում՝ լիցենզիա ունեցող անձին ծանուցելով այդ մասին: Նախապատվության իրավունքը իրացնելու կարգը սահմանվում է Կառավարության որոշմամբ:

2.2. Սույն հոդվածի 2.1-րդ մասում նշված նախապատվության իրավունքի իրականացման դեպքում գործարքի առարկա գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի ձեռքբերման արժեքը չի կարող գերազանցել դրանց շուկայական արժեքը, որը որոշվում է «Գնահատման գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով տրված գնահատման հաշվետվությամբ: Մեկից ավելի գնահատման հաշվետվությունների առկայության դեպքում հիմք է ընդունվում դրանցով սահմանված արժեքների միջինը, եթե տարբեր գնահատման հաշվետվություններով սահմանված արժեքների տարբերությունը չի գերազանցում 10 տոկոսը: Մեկից ավելի գնահատման հաշվետվությունների արժեքների տարբերությունը 10 տոկոսից ավելին լինելու դեպքում հիմք է ընդունվում 10 տոկոսի չափով տարբերությունը, և գնահատման արժեքը որոշվում է սույն հոդվածով սահմանված կարգով:».

3. Սույն հոդվածի 1-2-րդ կետերում նշված գործարքի համաձայնեցումը կարող է մերժվել, եթե այն խախտում է կամ կարող է խախտել էներգետիկ համակարգի հուսալիությունը կամ անվտանգությունը կամ ներքին շուկայի սպառողների շահերը, կամ ձեռքբերողը չունի անհրաժեշտ փորձ կամ չի պահպանվել սույն

հոդվածի 2.1-2.2-րդ մասերով սահմանված նախապատվության իրավունքի իրականացման կարգը, ինչպես նաև համաձայնություն ստանալու համար ներկայացված փաստաթղթերը և (կամ) տեղեկատվությունը չեն համապատասխանում հանձնաժողովի սահմանած կարգի պահանջներին, իսկ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գործարքների դեպքում նաև, եթե դրանք Հայաստանի Հանրապետության կառավարության գնահատմամբ վնասում են կամ կարող են վնասել ազգային անվտանգությունը կամ պետական շահերը:

4. Սույն հոդվածի 1-2-րդ կետերի դրույթները չեն տարածվում մինչև 30 ՄՎտ հզորությամբ կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձանց, ինչպես նաև մինչև 30 ՄՎտ գումարային հզորությամբ մեկից ավելի կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիաներ ունեցող անձանց վրա, եթե նրանք չունեն այլ լիցենզիաներ, որոնց դեպքում պահանջվում է սույն հոդվածի 1-2-րդ կետերով նախատեսված համաձայնեցում:

5. Առանց սույն հոդվածում նշված համաձայնության կնքված կամ դրա կնքմանը համաձայնություն տալու մասին հանձնաժողովի որոշմամբ սահմանված պայմաններին չհամապատասխանող գործարքն առ ոչինչ է:

***(27-րդ հոդվածը լրաց. 19.06.13 ՀՕ-86-Ն, խմբ. 07.02.18 ՀՕ-100-Ն, փոփ., լրաց. 18.11.21 ՀՕ-365-Ն)***

## ~~Հոդված 52. ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ~~

~~1. Լիցենզիայից կամավոր հրաժարվելու կամ անձին լիցենզիայից զրկելու դեպքերում սպառողների անխափան մատակարարումն ապահովելու նպատակով հանձնաժողովը, մինչև գործունեության նոր լիցենզիա տալը, իրավունք ունի համապատասխան որոշմամբ պարտադրել լիցենզիայից կամավոր հրաժարված կամ զրկված անձին ժամանակավորապես շարունակել իր գործունեությունը՝ հանձնաժողովի սահմանած պայմաններին և դրույթներին համապատասխան: Այդ որոշումը չկատարելու դեպքում կիրառվում են սույն հոդվածի 3-րդ կետի դրույթները:~~

~~2. Հանձնաժողովը պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները նոր լիցենզիա տալու գործընթացն արագացնելու համար: Լիցենզիայից զրկված անձը սահմանված պայմանները բավարարելու դեպքում իրավունք ունի ընդհանուր հիմունքներով դիմել հանձնաժողով՝ նոր լիցենզիա ստանալու համար:~~

~~3. Եթե լիցենզիայից զրկված անձը չի բավարարում գործունեության նոր լիցենզիա ստանալու անհրաժեշտ պայմանները կամ հրաժարվում է նոր լիցենզիա ստանալու իրավունքից, ապա նա օտարում է լիցենզավորված գործունեությունն ապահովող՝ իր սեփականությունը հանդիսացող գույքային համալիրը, կամ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գործունեության լիցենզիայից զրկված անձի բաժնետերերին առաջարկում է իր հետ համաձայնեցված կարգով օտարել այդ ընկերության բաժնետոմսերը: Լիցենզիայից զրկված անձի՝ գործունեության նոր լիցենզիա ստանալու պայմանները չբավարարելու և իր սեփականությունը կազմող լիցենզավորված գործունեության իրականացումն ապահովող գույքային համալիրը չօտարելու դեպքում, որպես բացառիկ միջոց,~~

այդ գույքը կարող է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 28-րդ հոդվածով սահմանված կարգով` օրենքի հիման վրա, օտարվել պետության և հասարակության կարիքների համար` նախնական համարժեք փոխհատուցմամբ: Գույքի օտարման ընթացքում սպառողների շահերի պաշտպանության նպատակով հանձնաժողովը նշանակում է գործունեության լիցենզիայից զրկված անձի գույքի ժամանակավոր կառավարիչ:

### Հոդված 52. Սպառողների շահերի պաշտպանության երաշխիքները

1. Լիցենզիայից կամավոր հրաժարվելու դեպքում սպառողների անխափան մատակարարումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը, մինչև գործունեության նոր լիցենզիա տալը, իրավունք ունի համապատասխան որոշմամբ պարտադրել լիցենզիայից կամավոր հրաժարված անձին ժամանակավորապես շարունակել իր գործունեությունը՝ հանձնաժողովի սահմանած պայմաններին և դրույթներին համապատասխան կամ լիցենզավորված գործունեության իրականացումը պատվիրակել ժամանակավոր կառավարչին: Լիցենզիայի գործողությունը դադարեցվելու դեպքում սպառողների անխափան մատակարարումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը, մինչև գործունեության նոր լիցենզիա տալը, իրավունք ունի համապատասխան որոշմամբ լիցենզիայից զրկված անձի լիցենզավորված գործունեության իրականացումը պատվիրակել ժամանակավոր կառավարչին՝ բացառությամբ սույն օրենքի 52.1-րդ հոդվածով սահմանված դեպքի:

2. Հանձնաժողովը պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները նոր լիցենզիա տալու գործընթացն արագացնելու համար:

3. Եթե անձը հրաժարվում է իր գործունեությունը շարունակելուց կամ նրա լիցենզիայի գործողությունը դադարեցվել է, ապա Կառավարությունը այդ անձի բաժնետերերին առաջարկում է իր հետ համաձայնեցված կարգով օտարել այդ ընկերության բաժնետոմսերը, գույքը կամ լիցենզավորված գործունեությունն ապահովող՝ իր սեփականությունը հանդիսացող գույքային համալիրը: Սույն մասով սահմանված օտարումը եռամսյա ժամկետում չիրականացվելու դեպքում, որպես բացառիկ միջոց, բաժնետոմսերը, գույքը կամ լիցենզավորված գործունեությունն ապահովող գույքային համալիրը կարող է օտարվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածին համապատասխան:

4. Սույն հոդվածով սահմանված կարգով նշանակված ժամանակավոր կառավարչի գործունեության ժամանակահատվածը սահմանվում է մինչև սույն հոդվածով սահմանված կարգով նոր լիցենզիա տալը կամ գույքի օտարումը:

**Հոդված 52.1. Սպառողների շահերի պաշտպանության նպատակով կանխարգելիչ միջոցների կիրառումը**

1. Սույն օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ և 6-րդ մասերով սահմանված արարքը կատարելու հիմքով վարույթ հարուցելու դեպքում Հանձնաժողովի նախագահը կարող է կայացնել վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու մասին որոշում: Կանխարգելիչ միջոցառումների կիրառման դեպքում, ի թիվս այլնի, հաշվի է առնվում նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը:

2. Սույն հոդվածով սահմանված կարգով Հանձնաժողովի նախագահը իրավասու է կիրառել հետևյալ կանխարգելիչ միջոցառումներից մեկը կամ մի քանիսը միասին.

1) սահմանել առերևույթ խախտումների վերացման կամ դրանց հետևանքների վերացման ծրագիր և լիցենզավորված անձից պահանջել իրականացնել դրանով սահմանված միջոցառումները.

2) հրավիրել լիցենզավորված անձի կառավարման բարձրագույն մարմնի ժողով՝ Հանձնաժողովի նախագահի կողմից սահմանված օրակարգով.

3) պահանջել Հանձնաժողովի նախագահի սահմանած ժամկետում կատարել լիցենզավորված անձի կանոնադրության փոփոխություն և գրանցել կանոնադրության փոփոխությունները.

4) պահանջել Հանձնաժողովի նախագահի սահմանած ժամկետում կատարել լիցենզավորված անձի կառավարման մարմինների անդամի կամ անդամների փոփոխություն.

5) նշանակել լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարիչ:

3. Լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարչի նշանակմամբ նրան են անցնում լիցենզավորված անձի գործադիր մարմնի բոլոր լիազորությունները՝ բացառելով ժամանակավոր կառավարիչ նշանակելու մասին որոշմամբ սահմանված ժամանակահատվածում լիցենզավորված անձի գործադիր մարմնի կողմից լիցենզավորված անձի գործադիր կառավարումն իրականացնելը: Լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարչի գործունեության ժամանակահատվածում լիցենզավորված անձի կառավարման այլ մարմինները իրենց իրավասությունները իրականացնում են ժամանակավոր կառավարչի համաձայնությամբ:

4. Ժամանակավոր կառավարիչ կարող է նշանակվել բարձրագույն կրթություն և էներգետիկայի բնագավառում կամ կառավարման առնվազն 5 տարվա փորձ ունեցող կամ գործունեություն իրականացնող անձը:

5. Ժամանակավոր կառավարիչ նշանակելու դեպքում Հանձնաժողովի նախագահը վարչական վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառում կիրառելու մասին որոշմամբ պետք է սահմանի նաև ժամանակահատվածը, որի ընթացքում գործելու է ժամանակավոր կառավարիչը, որը կարող է սահմանվել ոչ ավել քան մինչև վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտի ուժի մեջ մտնելը:

6. Սույն հոդվածով նախատեսված վարչական վարույթի արդյունքում լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որոշում կայացվելու դեպքում ժամանակավոր կառավարչի գործունեության ժամանակահատվածը շարունակվում է մինչև սույն օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված գործընթացների ավարտը, եթե լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որոշմամբ Հանձնաժողովը չի նշանակում այլ կառավարիչ՝ սույն օրենքի 52-րդ հոդվածով սահմանված կարգով:

7. Ժամանակավոր կառավարիչ նշանակելու մասին որոշումը պետք է հրապարակվի Հանձնաժողովի պաշտոնական կայքում և տեղադրվի Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, իսկ ժամանակավոր կառավարչի վերաբերյալ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված տեղեկությունները իր դիմումի հիման վրա գրառվեն իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանում:

8. Ժամանակավոր կառավարչի գործունեության դիմաց վարձատրությունը իրականացվում է լիցենզավորված անձի հաշվին՝ Հանձնաժողովի նախագահի կողմից սահմանված չափով:

9. Ժամանակավոր կառավարչի գործունեության արդյունքում լիցենզավորված անձին պատճառված վնասները ենթակա են հատուցման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով: